# 2.3. ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ

**ՍԵՐԳԵՅ ԴՈԽՈԼՅԱՆ**
**ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**22.07.2021-20.09.2021**

***Ներածություն:*** 1946 թ. ԱՄՆ-ից անկախանալուց հետո և մինչև 1960-ական թթ. երկիրը համարվում էր Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանում տնտեսապես ամենազարգացածներից մեկը, սակայն արդեն 2000-ական թթ. սկզբին այն համարվում էր այդ տարածաշրջանի երկրորդ ամենաաղքատ երկիրը (Paprock և ուրիշներ, 2006 թ., էջ 47)[1]: Իսկ 1960-ական թթ. Ֆիլիպինները չկարողացավ զարգանալ այնպես, ինչպես նրա ասիական հարևանները զարգացան, և 2000 թ. հետ էր մնացել 2-րդ փուլով արագ զարգացող ասիական երկրներից, ինչպիսիք են Թաիլանդը և Ինդոնեզիան, որոնց մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 1960-ական թթ. Ֆիլիպինների նույն ցուցանիշի մեկ երրորդն էր կազմում (Maca և Morris, 2012 թ., էջ 461)[2]:

1950-1960-ական թթ. երկրի ինդուստրացման նպատակով իրականցվող ներմուծման փոխարինման քաղաքականությունից հետո (Ofreneo, 2008 թ., էջ 66)[3], 1970-ական թթ. երկիրն անցում կատարեց արտահանմանը միտված արդյունաբերականացման և/կամ աշխատատար ոլորտների զարգացման հիման վրա ծրագրի իրականացմանը (Ofreneo, 2015 թ., էջ 113-114)[4]: Սակայն 1980-ականների սկզբից երկիրը սկսեց անցնել դեինդուստրացման գործընթացի միջով՝ չշարունակելով երկրի արդյունաբերացման նորարարացման գործընթացը, որի արդյունքում երկրի ինդուստրացման ստագնացիայի փուլում հայտնվեց ծառայությունների վրա հիմնված տնտեսության (Usui, 2012 թ., էջ viii)[5]: Այդ աճը պայմանավորված էր ինչպես գործնական գործընթացների արտապատվիրման (ԳԳԱ) սրընթաց աճով (Usui, 2012 թ., էջ viii), այնպես էլ միգրանտների դրամական փոխանցումների աճով, որն էլ խթանել էր երկրում մանրածախ առևտրի և բեռնափոխադրումների ոլորտների աճը

---

[1] Paprock, K. E., Yumol, B., & Atienza, T. V. (2006). National Human Resource Development in Transitioning Societies in the Developing World: The Philippines. Advances in Developing Human Resources, 8(1), p. 47. doi:10.1177/1523422305283057

[2] Maca, M., & Morris, P. (2012). The Philippines, the East Asian "developmental states" and education: a comparative analysis of why the Philippines failed to develop. Compare: A Journal of Comparative and International Education, 42(3), p. 461. doi:10.1080/03057925.2011.652814

[3] Ofreneo, R. E. (2008). Arrested Development: Multinationals, TRIMs and the Philippines' Automotive Industry. Asia Pacific Business Review, 14(1), p. 66. doi:10.1080/13602380701661010.

[4] Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, pp. 113-114, DOI: 10.1080/13547860.2014.974335

[5] Usui, N. (2012). Taking the Right Road to Inclusive Growth: Industrial Upgrading and Diversification in the Philippines. Mandaluyong: ADB. p. viii.

(Ofreneo, 2015 թ., էջ 116)[1]: Արդյունքում 2019 թ. ՀՆԱ-ի կառուցվածքում ծառայությունների մասնաբաժինը արդեն կազմել էր 61 % (1980-ին՝ 36.1 %), իսկ այդ ճյուղում ներգրավված էր զբաղվածների 58 %-ը[2]:

2010-ական թթ. սկզբին Ֆիլիպիններն իրեն դիրքավորել էր որպես աշխարհում գործնական գործընթացների արտապատվիրման (ԳԳԱ) հիմնական կենտրոններից մեկը, որի հասույթը 2009 թ. կազմել էր 7.7 մլրդ ԱՄՆ դոլար, և ոլորտում զբաղվածների թվաքանակը կազմում էր մոտ կես միլիոն մարդ (Usui, 2012 թ., էջ 1): 2001 թ. համամետ 2014-ին երկրի ծառայությունների արտահանման կառուցվածքում զգալիորեն ավելացել էր ժամանակակից ծառայությունների[3] տեսակարար կշիռը՝ կազմելով 71.67 % 2001 թ. 12.94 %-ի համեմատ, որը ASEAN-ի տարածաշրջանում ամենաբարձրն էր, և այս ցուցանիշով Ֆիլիպինները գերազանցում էր նույնիսկ Սինգապուրին, որի դեպքում այդ մասնաբաժինը մոտ 50 % էր կազմել (Sermcheep, 2019 թ., էջ 168-169)[4]: 2020 թ. Ֆիլիպինների այլ գործնական ծառայությունների արտահանումը կազմել էր 17.65 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը համարվում էր 2005-2020 թթ. ամենաբարձր ցուցանիշը[5]:

2009-2013 թթ. Ֆիլիպինների իրական ՀՆԱ-ն աճում էր 6.3 %-ով (բաղադրյալ տարեկան աճի տեմպ), երբ Հարավարևելյան Ասիայի տարածաշրջանի բաղադրյալ տարեկան աճի տեմպը կազմում էր 6 %, և միայն Չինաստանն էր ավելի բարձր տեմպ արձանագրել այդ նույն ժամանակահատվածում, և ըստ Deloitte-ի կանխատեսումների՝ հետագա տարիներին այդ աճի տեմպերը պահպանվելու էին, և ընկերությունը տեսակետ էր հայտնել, թե արդյո՞ք Ֆիլիպինները վերածվում են հաջորդ «Ասիական վագրի», թե՞ ոչ (Deloitte, 2014 թ. էջ 1)[6]: 2014-2019 թթ. Ֆիլիպինների բաղադրյալ տարեկան աճի տեմպը կազմեց 6.6 %, իսկ ՀՆԱ-ն 2019 թ.՝ 376.82 մլրդ ԱՄՆ դոլար էր, մինչդեռ այդ ցուցանիշը կազմել էր 208.37 մլրդ ԱՄՆ դոլար 2010 թ.[7]:

---

1 Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, p. 116, DOI: 10.1080/13547860.2014.974335.

2 World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

3 Ժամանակակից ծառայությունների շարքին են դասվում ՏՀՏ-ների վրա հիմնված ծառայությունները՝ հաղորդակցության, համակարգչային, տեղեկատվական, մտավոր սեփականության, ֆինանսական և գործնական գործընթացներին առնչվող ծառայություններ: Աղբյուրը՝ Sermcheep S., Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 2019;1(2): p. 164, 168-169, 172. doi:10.1177/2631684619883443:

4 Sermcheep S. (2019). Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 1(2): pp.168-169. doi:10.1177/2631684619883443.

5 Central Bank of the Republic of the Philippines (2021). “Services” database, https://www.bsp.gov.ph/SitePages/Statistics/External.aspx?TabId=1.

6 Deloitte (2014). Competitiveness: Catching the next wave. The Philippines. Deloitte Touche Tohmatsu Limited: London, UK, p. 1.

7 World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021): Նշում՝ բաղադրյալ տարեկան աճի տեմպը հաշվարկվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրի տվյալները:

***Արդիականությունը:*** Արտաքին պարտքային ճգնաժամ, քաղաքական հեղաշրջման փորձեր, իշխանության ճգնաժամ[1] հաղթահարած Ֆիլիպինները ՀՀ-ի նման ծառայությունների վրա հիմնված տնտեսության է վերածվել: Տնտեսության այդպիսի վերափոխումն ու դրանում տնտեսական քաղաքականության և հատկապես արտապատվիրված ժամանակակից ծառայությունների ներգրավմանն ուղղված համապատասխան միջոցառումների և գործոնների ուսումնասիրությունը պայմանավորում է հոդվածի արդիականությունը:

***Նպատակը:*** Դիտարկելով Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերածվելու գործընթացը և դրանում ժամանակից ծառայությունների ոլորտի կայացումը (գործնական գործընթացների արտապատվիրում)՝ առաջարկել համապատասխան քայլեր ՀՀ տնտեսական քաղաքականության և ժամանակակից ծառայությունների արտահանման ծավալների ավելացման ուղղությամբ:

***Խնդիրները:*** Նպատակին հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները՝

- տալ Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերափոխման ուղին և տնտեսական քաղաքականության փոփոխությունը,
- ուսումնասիրել Ֆիլիպինների ժամանակակից ծառայությունների ոլորտի կայացման ուղին՝ երկրի գործնական գործընթացների արտապատվիրման կենտրոնի վերափոխվելու օրինակով, ինչպես նաև այն գործոնները և միջոցառումները, որոնք խրախուսեցին այդ ոլորտի կայացումը,
- բացահայտել ու հիմնավորել ՀՀ-ում նմանատիպ միջոցառումների կիրառման կարևորությունն ու հնարավորությունները՝ ներկայացնելով ՀՀ-ի և Ֆիլիպինների ՏՏ-ԳԳԱ ծառայությունների արտահանման միտումները:

***Գրականության ակնարկ:*** Kim-ի և Wood-ի (2020 թ. էջ 23-24)[2] համաձայն՝ Ասիայում ծառայությունների ոլորտի զարգացումը կարող է նպաստել տնտեսական աճին, քանի որ հիմնականում աշխատատար համարվող ծառայությունների ոլորտների աճը կարող է հանգեցնել զբաղվածների թվաքանակի աճի տարածաշրջանի՝ համապատասխան հմտությունները արագ յուրացնող աշխատուժի առաջարկի պարագայում, ինչն էլ տնտեսական աճը ավելի ներառական կդարձնի:

Noland-ը, Park-ը և Estrada-ն (2012 թ. էջ 13-15)[3] զարգացող ասիական երկրների պանելային տվյալների հիման վրա արված վերլուծության արդյունքում նշում են, որ ծառայությունների ոլորտի աճը ժամանակի ընթաց-

[1] WB (2018). Growth and Productivity in the Philippines: Winning the Future. WB, Washington, DC. p. 3, 28.

[2] Kim, J., & Wood, J. (2020). Service sector development in Asia: an important instrument of growth. Asian-Pacific Economic Literature. 34(1), pp. 23-24. doi:10.1111/apel.12282.

[3] Noland, M., Park, D. & Estrada, G. (2012). Developing the Service Sector as Engine of Growth for Asia: An Overview. ADB Economics Working Paper Series No. 320. Mandaluyong, Philippines: ADB. pp. 13-15.

քում կոռելացված է եկամուտների աճի, ինչպես նաև կրթական մակարդակի բարձրացման (կրթության վրա ծախսած ակնկալվող տարիների քանակ) հետ, իսկ ՀՀ-ի և Ֆիլիպինների դեպքում հեղինակները պարզել էին, որ Ֆիլիպինների ծառայությունների ոլորտը ավելի մեծ չափի էր, քան ակնկալվող մեծությունն էր (1960-2010 թթ. տվյալների հիման վրա), մինչդեռ ՀՀ-ի դեպքում հակառակ պատկերն էր արձանագրվել (1990-2010 թթ. տվյալների հիման վրա): Ֆիլիպինների պարագայում ծառայությունների ճյուղում զբաղվածների թվաքանակը ավելի բարձր էր, քան ակնկալվող մեծությունն էր (Noland, Park և Estrada, 2012 թ. էջ 16): Հեղինակները նաև նշում են, որ ժամանակակից ծառայությունները համարվում են արտահանող հատվածի ոլորտ և երկրին հնարավորություն են ընձեռում ավելացնելու վերջիններիս ծավալը, ինչպես նաև դիվերսիֆիկացնելու արտահանման կառուցվածքը (Noland, Park և Estrada, 2012 թ. էջ 17): Ինչ վերաբերում է Ֆիլիպիններին, ապա դա այն երկիրն է, որը հետ էր կանգնել արդյունաբերականացման հեռանկարներից, որին նպաստել էին ՏՀՏ-ների, ինչպես նաև այլ նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները, սակայն, ըստ հեղինակների, որոշակի բալանս պետք է պահպանվի մշակող արդյունաբերության և ծառայությունների ոլորտի միջև, և դա էլ մնում է ամենակենսունակ ռազմավարություններից մեկը ասիական երկրների պարագայում (Noland, Park և Estrada, 2012 թ. էջ 34-35):

Park-ը և Shin-ը (2012 թ., էջ 18-19, 25)[1] 12 ասիական երկրների (ներառյալ Ֆիլիպինները) տվյալների հիման վրա (1960-2010 թթ. առանձին ժամանակահատվածների կտրվածքով) իրականացված գնահատման արդյունքներով պարզել են, որ Ֆիլիպինների պարագայում ծառայությունների ոլորտի կատարողականը չի տարբերվում համաշխարհային նորմերից, և ոլորտի նպաստումը ՀՆԱ-ի աճին 2000-ական թթ. կազմել էր 62.8 %: Հեղինակները նաև պարզել են, որ որքան ցածր է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն, այնքան մեծ է հնարավորությունը ծառայությունների ճյուղում աշխատուժի արտադրողականության աճի համար, իսկ ծառայությունների արտահանումը վիճակագրորեն նշանակալի և դրական ազդեցություն ունի ծառայությունների ոլորտի արտադրողականության աճի վրա (Park և Shin, 2012 թ., էջ 25)[2]:

Nasir-ը և Kalirajan-ը (2014 թ., էջ 13, 18)[3] Հարավային Ասիայի, Արևելյան Ասիայի և ASEAN տարածաշրջանի, ինչպես նաև Եվրոպայի և Ամերիկայի տարեկան 2002-2011 թթ. ժամանակակից ծառայությունների երկկողմանի

---

[1] Park, D. & Shin, K. (2012). The Service Sector in Asia: Is It an Engine of Growth? ADB Economics Working Paper Series No. 322. Mandaluyong, Philippines: ADB. pp. 18-19, 25.

[2] Park, D. & Shin, K. (2012). The Service Sector in Asia: Is It an Engine of Growth? ADB Economics Working Paper Series No. 322. Mandaluyong, Philippines: ADB. p. 25.

[3] Nasir, Sh. & Kalirajan, K. (2014). Modern Services Export Performances among Emerging and Developed Asian Economies. ADB Working Paper Series on Regional Economic Integration No 143, Mandaluyong, Philippines: ADB. p. 13, 18.

առևտրի տվյալների հիման վրա կատարված գնահատման արդյունքներով պարզել են, որ Ֆիլիպինների պարագայում թեպետ արձանագրվել է ժամանակակից ծառայությունների արտահանման աճ արտապատվիրման շնորհիվ, սակայն վերջինս լիովին չէր օգտագործել իր ներուժը, և գործնական գործընթացներին առնչվող ծառայությունների դեպքում Ֆիլիպինները օգտագործել էին իր ներուժի 57 %-ը: Ըստ հեղինակների՝ Ասիական երկրների ներուժի ավելացման տեսանկյունից հիմնական գործոններից են ՏՀՏ ենթակառուցվածքի և որակյալ շրջանավարտների առկայությունը ՏՏ-ի հիման վրա ժամանակակից ծառայությունների արտահանման դեպքում (Nasir և Kalirajan, 2014 թ., էջ 20-21):

Sermcheep-ը (2019 թ.)[1] 1980-2014 թթ. պանելային տվյալների հիման վրա ուսումնասիրել է ծառայությունների արտահանման ազդեցությունը տնտեսական աճի վրա ASEAN-ի տարածաշրջանի երկրներում, իսկ արդյունքները ցույց են տվել, որ վերջին տասնամյակներում ASEAN-ի տարածաշրջանի երկրներում արձանագրվել է ծառայությունների արտահանմամբ պայմանավորված տնտեսական աճ: Ծառայությունների արտահանման տվյալները ներկայացնելով երկու խմբի տեսքով՝ ավանդական և ժամանակակից ծառայությունների արտահանման, գնահատման արդյունքների հիման վրա հեղինակը պարզել է, որ ծառայությունների երկու խումբն էլ նպաստում են ՀՆԱ-ի աճին ապրանքների արտահանմանը զուգահեռ, սակայն ժամանակակից ծառայությունների արտահանման պարագայում ազդեցությունը ավելի թույլ է քան ավանդական ծառայությունների խմբի դեպքում[2]: Իսկ ապրանքների արտահանման ցածր տեմպերի դեպքում և տնտեսական աճի դեպի ծառայությունների վրա ուղղորդման քաղաքականության պարագայում ծառայությունների արտահանումը ավելի մեծ դերակատարում է սկսել խաղալ՝ որպես տնտեսական աճի նոր շարժիչ ուժ[3]:

***Մեթոդաբանություն:*** Վերլուծությունն իրականացվել է Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերափոխվելու ընթացքում ժամանակակից ծառայությունների ոլորտի կայացման գործում հիմնական գործոնների և միջոցառումների դիտարկմամբ, ինչպես նաև համեմատվել են ՀՀ-ի և Ֆիլիպինների ժամանակակից ծառայությունների արտահանման միտումները: Վերլուծության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի, Առևտրի համաշխարհային կազմակերպության, Ֆիլիպինների կենտրոնական բանկի և ՀՀ վիճակագրական կոմիտեի առցանց տվյալների բազաները: Իսկ ուսումնասիրության հիմնական արդյունք-

[1] Sermcheep S. (2019). Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 1(2):163-182. doi:10.1177/2631684619883443.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Sermcheep S. (2019). Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 1(2):163-182. doi:10.1177/2631684619883443.

ների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել են սինթեզի և համեմատական վերլուծության մեթոդները:

***Վերլուծություն:*** 1960-ական թթ. հետո և հատկապես 1973 թ. 1961 թվականից ի վեր իրական ՀՆԱ-ի ամենամեծ աճի տեմպը (8.92 %)[1], արձանագրելուց հետո տնտեսական աճի տեմպերը սկսեցին դանդաղել, և երկիրը ընթանում էր «անվերջ տնտեսության որոշակի վերականգնման և ռեցեսիաների[2] փուլով», որին չհաջողվեց աճել այնպիսի տեմպերով, որի շնորհիվ հնարավոր կլիներ բավարարել արագ աճող բնակչության պահանջները (2005 թ.՝ 86.3 մլն 1960 թ. 26.3 մլնի համեմատ[3])՝ եկամուտների և աշխատատեղերի առումով (Ofreneo, 2008 թ., էջ 65)[4]: Սա հանգեցրեց նրան, որ աշխատանքային միգրանտների թվաքանակը սկսեց տարեցտարի ավելանալ (Ofreneo, 2008 թ., էջ 65) և արդեն 2000 թ. պայմանագրով աշխատանքի մեկնածների թվաքանակը կազմում էր 2.99 մլն[5], մինչդեռ 1975 թ. ընդամենը 36,029 մարդ էր աշխատանքային պայմանագրով Ֆիլիպիններից մեկնել (Ofreneo & Samonte, 2005 թ., էջ 4, 7)[6]: Այդ տարիների ընթացքում ավելացավ Ֆիլիպինների կախումը աշխատողների դրամական փոխանցումներից (Ofreneo, 2008 թ., էջ 65)[7]. այսպես, եթե միայն 1975 թ. աշխատանքային պայմանագրով մեկնած միգրանտների դրամական փոխանցումները կազմում էին 103 մլն ԱՄՆ դոլար, ապա արդեն 2000 թ. այդ ցուցանիշը կազմել էր մոտ 5.7 մլրդ ԱՄՆ դոլար (Ofreneo & Samonte, 2005 թ., էջ 7):

Խնդիրները հիմնականում պայմանավորված էին արդյունաբերական կառուցվածքի խորացմանն և ընդլայնմանն ուղղված այնպիսի հստակ ծրագրի բացակայությամբ, որով առաջնորդվեցին Չինաստանը և ասիական մի շարք երկրներ, և հենց այդ ծրագրի բացակայությունն է բացատրել անհասկանալի կերպով վարվող քաղաքականության փոփոխությունը՝ 1950-1960-ական թթ. ներմուծման փոխարինման արդյունաբերական ռազմավարու-

---

[1] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

[2] 1983-1985 և 1986-1991 թթ. ռեցեսիաների պատճառներն էին 1983 թ. արտաքին պարտքային ճգնաժամը, 1986-1991 թթ. հեղաշրջման փորձերը և իշխանության ճգնաժամը, որի արդյունքում Ֆիլիպինների պարագայում ՀՔ-ն 1980-ական թթ. անվանել էր «կորցրած տասնամյակ»: Աղբյուրը՝ WB (2018). Growth and Productivity in the Philippines: Winning the Future. WB, Washington, DC. p. 3, 28.

[3] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

[4] Ofreneo, R. E. (2008). Arrested Development: Multinationals, TRIMs and the Philippines' Automotive Industry. Asia Pacific Business Review, 14(1), p. 65. doi:10.1080/13602380701661010.

[5] Առանց փաստաթղթի աշխատող աշխատանքային միգրանտների թվաքանակը՝ 1.84 մլն և մշտական բնակչության իրավունք ունեցողներինը (էմիգրանտներ)՝ 2.55 մլն մարդ, իսկ ընդհանուրը՝ 7.38 մլն մարդ 2000 թ.՝ 1995 թ. 6 մլնի համեմատ: Աղբյուրը՝ Ofreneo & Samonte, 2005 թ., էջ 4, 7:

[6] Ofreneo, R. & Samonte, I. (2005). Empowering Filipino migrant workers: policy issues and challenges. International Migration Papers 64, International Labour Office, ILO: Geneva, Switzerland. p. 4, 7.

[7] Ofreneo, R. E. (2008). Arrested Development: Multinationals, TRIMs and the Philippines' Automotive Industry. Asia Pacific Business Review, 14(1), p. 65. doi:10.1080/13602380701661010.

թյունից՝ դեպի արտահանմանը միտված արդյունաբերական զարգացման խրախուսմանը (Ofreneo, 2008 թ., էջ 66):

1972 թ. մշակված Արտահանմանը միտված արդյունաբերականացման և/կամ աշխատատար ոլորտների զարգացման հիման վրա ծրագրի իրականացման նպատակով ՀԲ-ն տրամադրեց «զարգացման ֆինանսավորում»՝ վարկային ծրագիր, որը նպատակ ուներ զարգացնելու ենթակառուցվածքները, հատկապես արտահանմանը միտված ձեռնարկությունների համար ենթակառուցվածքները, ինչպիսիք էին արտահանման նպատակով մշակող գոտիներ, նավահանգիստների և օդանավակայանների արդիականացումը (Ofreneo, 2015 թ., էջ 113-114)[1]: Սկզբնական փուլում այդ գոտիները ներգրավեցին ներդրողների, որոնք արտադրում էին աշխատատար համարվող ոլորտների արտադրանք, ինչպիսիք են՝ հագուստ, կոշկեղեն, խաղալիքներ և այլն, իսկ արդեն 1970-ական թթ. վերջին՝ ներդրողների, որոնք ներգրավված էին էլեկտրոնիկայի հավաքմամբ (Ofreneo, 2015 թ., էջ 114):

Սակայն ՀԲ-ին չէին գոհացնում 1970-ական թթ. արձանագրված արդյունքները, և վերջինս կառավարությանը դրդեց ավելի խորացնել արտահանմանը միտված արդյունաբերականացման ծրագիրը՝ երկրին տրամադրելով վարկեր կառուցվածքային փոփոխությունների ծրագրին աջակցելու նպատակով (Ofreneo, 2015 թ., էջ 114)[2]: Այդ ծրագիրը իրենից ներկայացնում էր մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն էր տնտեսության ազատականացման գործընթացի շարունակումը՝ մաքսատուրքերի դրույքաչափերի նվազում, միջազգային առևտրին առնչվող սահմանափակումների վերացում, ներդրումային ռեժիմի ազատականացում, տնտեսության հիմնական ոլորտների կամ ճյուղերի (ֆինանսներ, արդյունաբերություն, ծառայություններ և գյուղատնտեսություն) դեպքում կարգավորման մակարդակի նվազում, պետական ձեռնարկությունների սեփականաշնորհում և այլն (Ofreneo, 2015 թ., էջ 114): Սակայն արտահանմանը միտված արդյունաբերականացման ծրագրի իրականացման ժամանակահատվածում Ֆիլիպինների 1980-ական, 1990-ական և 2000-ական թթ. տնտեսական աճի տեմպերը զիջում էին նախորդ երեք տասնամյակների ընթացքում արձանագրված աճի տեմպերին, իսկ մշակող արդյունաբերության պարագայում 1980-ական թթ. գրեթե զրոյական աճի տեմպ արձանագրվեց (Ofreneo, 2015 թ., էջ 113, 115): Մշակող արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում սկսեց նվազել 1980-2019 թթ., և 2019 թ. այն միայն 18.52 % էր 1980 թ. 25.7 %-ի համեմատ[3]: Իսկ մշակող արդյունաբերության ապրանքների արտահանման հիմնական

[1] Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, pp. 113-114, DOI: 10.1080/13547860.2014.974335.

[2] Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, p. 114, DOI: 10.1080/13547860.2014.974335.

[3] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

խումբը 2000-2019 թթ. եղել է «մեքենաներ և սարքավորումներ»-ը (գրասենյակային և հեռահաղորդակցության համար նախատեսված սարքավորումներ, մասնավորապես՝ ինտեգրալ սխեմաներ և էլեկտրոնային բաղադրիչներ, որոնց արտահանումը 2019 թ. կազմել էր 23.62 մլրդ ԱՄՆ դոլար)[1]:

Նույն ժամանակահատվածում արդյունաբերության ստագնացիան զուգորդվել էր գյուղատնտեսության է՛լ ավելի արագ ընթացող ստագնացիայով, և երկիրը վերածվեց գյուղատնտեսական մթերքի զուտ ներկրողի 1995 թ. սկզբին, երբ երկիրը սկսեց անդամակցել ԱՀԿ-ին, և դա հանգեցրեց նրան, որ արդեն 2010 թ. գյուղմթերքի արտահանումը կազմել էր մոտ 4.1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ներմուծումը՝ 7.3 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ Ֆիլիպինները 19-րդ և 20-րդ դարերում համարվում էր գյուղմթերքի զուտ արտահանող (Ofreneo, 2015 թ., էջ 112, 115-116): Լինելով հաջողակ բանան և արքայախնձոր արտադրող՝ երկրին չհաջողվեց դառնալ ինքնաբավ հիմնական տեսակների (բրինձ և եգիպտացորեն), ձկնաբուծության, բանջարեղենի և մսամթերքի կտրվածքով, ինչպես նաև չկարողացավ կայունացնել շուկան իր ավանդական արտահանվող մշակաբույսերի (կոկոս, շաքարավազ, ծխախոտ և այլն) պարագայում (Ofreneo, 2015 թ., էջ 112)[2]: Գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում սկսեց նվազել 1980-2019 թթ., և 2019 թ. այն միայն 8.82 % էր 1980 թ. 25.12 %-ի համեմատ[3]:

Միևնույն ժամանակ 1980-ական թթ. սկզբից երկիրը սկսեց անցնել դեինդուստրացման գործընթացի միջով, քաղաքային բնակավայրերի զարգացումը հիմնականում պայմանավորված էր ծառայությունների ոլորտով: Ի տարբերություն իր հարևանների՝ այն չշարունակեց երկրի արդյունաբերության նորարարացման գործընթացը, որով առաջնորդվեցին իր հարևաններից շատերը, և երկիրը հայտնվեց ինդուստրացման ստագնացիայի փուլում (Usui, 2012 թ., էջ viii)[4]: Արդյունքում երկիրը վերածվեց ծառայությունների վրա հիմնված տնտեսության, իսկ այդ աճը պայմանավորված էր գործնական գործընթացների արտապատվիրման սրընթաց աճով (Usui, 2012թ., էջ viii), ինչպես նաև մանրածախ առևտրի և բեռնափոխադրումների ոլորտների աճով, ինչն էլ իր հերթին բացատրվում էր միգրանտների և իրենց ընտանիքների աճող ծախսերով (Ofreneo, 2015 թ., էջ 116):

2000-ական թթ. ծառայությունները կազմում էին երկրի ՀՆԱ-ի ավելի քան 50 %-ը, զբաղվածների ավելի քան 50 %-ը 2009 թ. ներգրավված էր ծառայությունների ոլորտում, իսկ արդեն 2019 թ. ծառայությունների մասնաբաժինը

---

[1] WTO (2021). WTO Data online database, https://timeseries.wto.org/ (last accessed October 19, 2021): Նշում՝ ըստ ապրանքների վիճակագրության:

[2] Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, p. 112, DOI: 10.1080/13547860.2014.974335.

[3] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

[4] Usui, N. (2012). Taking the Right Road to Inclusive Growth: Industrial Upgrading and Diversification in the Philippines. Mandaluyong: ADB. p. viii.

ՀՆԱ-ի կառուցվածքում ավելի էր մեծացել ու կազմում էր 61 %, և ծառայությունների ոլորտում ներգրավված էր զբաղվածների 58 %-ը (ՀԲ, 2021 թ.)[1]:

Ինչ վերաբերում էր 1970-ական թթ. կեսերին երկրի աշխատանքի և զբաղվածության նախարարության կողմից մշակված պայմանագրերով աշխատանքային միգրացիայի ծրագրին, ապա այն հիմնավորվում էր որպես ժամանակավոր ծրագիր, մինչև Աշխատատար ոլորտների զարգացման հիման վրա ծրագիրը կսկսեր հաջողություններ գրանցել՝ գործազրկության մակարդակի կրճատման նպատակով (Ofreneo, 2015 թ., էջ 116): Այս ծրագրի շրջանակներում արտասահմանում պայմանագրով աշխատող միգրանտների թիվը սկսեց աճել, և այն 2011 թ. արդեն կազմում էր 4.51 մլն մարդ (ընդհանուր միգրանտներինը՝ 10.44 մլն մարդ), որոնց կողմից ուղարկված դրամական փոխանցումները գերազանցում էին 20 մլրդ ԱՄՆ դոլարը (Ofreneo, 2015 թ., էջ 121):

2010-ական թթ. սկզբին Ֆիլիպինները հանդես եկավ որպես աշխարհում գործնական գործընթացների արտապատվիրման (ԳԳԱ) հիմնական կենտրոններից մեկը, որի հասույթը 2009 թ. 7.7 մլրդ ԱՄՆ դոլար էր կազմել, և դա բացատրվում էր Ֆիլիպինների բնակիչների բավականին բարձր գրագիտության աստիճանով, որը զուգորդվում էր անգլերենի լայն օգտագործմամբ, ինչն էլ երկիրը դարձրեց ԳԳԱ ոլորտի զրավիչ հանգույց (Usui, 2012 թ., էջ 1)[2]: 2015-2019 թթ. այդ ցուցանիշը կրճատվեց ժամանակակից ծառայությունների աճին զուգահեռ ավանդական ծառայությունների արտահանման շնորհիվ, և այդ տեսակարար կշիռը արդեն կազմել էր մոտ 58 % 2019 թ., իսկ 2020 թ.՝ 74.3 %՝ համաճարակով պայմանավորված ավանդական ծառայությունների արտահանման ծավալների կրճատմամբ պայմանավորված[3]: 2020 թ. այլ գործնական ծառայությունների արտահանումը կազմել էր 17.65 մլրդ ԱՄՆ դոլար, որը 2005-2020 թթ. ամենաբարձր ցուցանիշն էր (2005 թ.՝ 4.49 մլրդ ԱՄՆ դոլար), իսկ ժամանակակից ծառայությունների արտահանման ծավալը կազմել էր 23.4 մլրդ ԱՄՆ (2005 թ.՝ 5.26 մլրդ ԱՄՆ դոլար)[4]: 2019 թ. ապրանքների արտահանումն (ըստ վճարային հաշվեկշռի հիմքի) կազմել էր 51.43 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ ծառայություններինը՝ 41.26 մլրդ ԱՄՆ դոլար, որից 17.36 մլրդ ԱՄՆ դոլարը այլ գործնական ծառայությունների արտահանմանն էր բաժին ընկել[5]:

---

[1] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

[2] Usui, N. (2012). Taking the Right Road to Inclusive Growth: Industrial Upgrading and Diversification in the Philippines. Mandaluyong: ADB. p. 1.

[3] Central Bank of the Republic of the Philippines (2021). “Services” database, https://www.bsp.gov.ph/SitePages/Statistics/External.aspx?TabId=1: Նշում՝ հեղինակների սեփական հաշվարկ, որի համար հիմք է հանդիսացել Sermcheep S. (2019). Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 1(2), p. 172-ում ներկայացված մեթոդաբանությունը:

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Central Bank of the Republic of the Philippines (2021). “Services” and “Net Goods” databases, https://www.bsp.gov.ph/SitePages/Statistics/External.aspx?TabId=1.

1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկսած բարեփոխումները միայն երկու տասնամյակ անց սկսեցին կարևոր դերակատարում խաղալ երկրի տնտեսական աճի վերականգման գործում՝ ազդեցություն ունենալով միայն 2000-ական թթ. երկրորդ կեսին, իսկ 1990-ական թթ. վերջերին վերականգնումը պայմանավորված էր առևտրի ազատականացմամբ, ֆինանսական ոլորտի աստիճանաբար ազատականացման և ֆինանսական միջնորդության խորացմամբ, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացմամբ, որոնք բարձրացրին երկրի մրցունակությունը, իսկ այդ բարեփոխումները, զուգորդվելով հարկաբյուջետային և մակրոտնտեսական քաղաքականությունների հետ, հանգեցրին ավելի բարձր տնտեսական աճի տեմպերի 2010-2016 թթ. (ՀԲ, 2018 թ., էջ 3)[1]:

2010-2019 թթ. Ֆիլիպինների իրական ՀՆԱ-ի տարեկան բաղադրյալ աճի տեմպը կազմել էր 6.3 %, որի արդյունքում աղքատության մակարդակը[2] 2018 թ. 17 % էր կազմել 2000 թ. 37.9 %-ի համեմատ (ՀԲ, 2021 թ.)[3]: 2019 թ. 108.12 մլն բնակչությամբ Ֆիլիպինների մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել էր 3,485.34 ԱՄՆ դոլար, իսկ 2000 թ. այդ ցուցանիշը կազմում էր 1,072.8 ԱՄՆ դոլար (ՀԲ, 2021 թ.): Այս միտումները ևս նպաստել էին գործազրկության մակարդակի կրճատմանը, որը 2019 թ. 2.24 % էր կազմում, մինչդեռ 2000 թ. 11.19 % էր: Միևնույն ժամանակ 2019 թ. երկրի կախումը դրամական փոխանցումներից ավելի էր մեծացել՝ կազմելով 35.2 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ-ի 9.33 %-ը), մինչդեռ 2000 թ. վերջիններիս ծավալը 6.92 մլրդ ԱՄՆ դոլար էր (ՀՆԱ-ի 8.3 %-ը, ՀԲ, 2021 թ.):

*ԳԳԱ ոլորտի կայացումը:* 2000-ական թթ. ԳԳԱ ոլորտի կտրուկ աճը ի սկզբանե պլանավորված չէր և ինքնաբուխ է եղել և նույնիսկ ներառված չի եղել Տնտեսական և զարգացման ազգային մարմնի (NEDA) 1999-2004 թթ. ծրագրի մեջ (Ofreneo, 2015 թ., էջ 116)[4]: Տնտեսական քաղաքականություն մշակողներին այդ ոլորտի սկզբնական զարգացումը հանկարծակի էր բերել (Kleibert և Mann, 2020 թ., էջ 1069)[5]: Դա սկսվեց այն բանից, երբ ԱՄՆ-ում հաճախորդների սպասարկման ծառայություններ մատուցողները համարեցին, որ ավելի էժան կլինի տեղափոխել այդ գործառույթը մի երկիր, որի աշխատուժը լավ տիրապետում է անգլերենին, ունի ՏՀՏ-ներից օգտվելու կարողու-

[1] World Bank (2018). Growth and Productivity in the Philippines: Winning the Future. World Bank, Washington, DC. p. 3.

[2] Օրական 3.2 ԱՄՆ դոլարից (2011 թ. գնողունակության պարիտետով արտահայտված) ցածր եկամուտների մակարդակ ունեցող բնակչության մասնաբաժին:

[3] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021). Բաղադրյալ տարեկան աճի տեմպը հաշվարկվել է հեղինակների կողմից:

[4] Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, p. 116, DOI: 10.1080/13547860.2014.974335

[5] Kleibert, J.M., Mann, L. (2020). Capturing Value amidst Constant Global Restructuring? Information-Technology-Enabled Services in India, the Philippines and Kenya. The European Journal of Development Research, Volume 32, p.1069. doi:10.1057/s41287-020-00256-1.

թյուն և ծանոթ է ամերիկյան մշակույթին, և ում կարելի է վճարել ԱՄՆ-ում գտնվող աշխատակիցների (զանգերի սպասարկման կենտրոն) աշխատավարձի մի մասը (Ofreneo, 2015 թ., էջ 116): Օտարերկրյա ներդրողներից որոշները իրենց՝ Հնդկաստանում գտնվող զանգերի սպասարկման կենտրոնները, հետագայում նաև ֆինանսների և այլ ոլորտներում ադմինիստրատիվ բեք օֆիսի (back-office) գործառույթները տեղափոխեցին Ֆիլիպիններ՝ հաշվի առնելով անգլերենի «չեզոք ակցենտ»-ը (Kleibert և Mann, 2020 թ., էջ 1069):

ԳԳԱ ոլորտը սկսեց զարգանալ 1980-ական թթ. վերջերին, սակայն վերջինս դանդաղ տեմպերով էր աճում և միայն 1992 թվականից սկսած ոլորտը զարգացման նոր փուլ թևակոխեց, երբ այդ տարի Ֆիլիպիններ մտավ «Accenture»-ը, որին այլ հայտնի ընկերություններ հետևեցին (Maquito, 2017 թ., էջ 144)[1]: 1997 թ. ԱՄՆ-ի «AOL»-ը սկսեց ԱՄՆ-ում գտնվող իր հաճախորդներին սպասարկել Ֆիլիպիններից (Kleibert, 2016 թ., էջ 36)[2]: «Sykes»-ը իր գործունեությունը սկսեց ծավալել 1997 թ., այնուհետ 1998 թ. մուտք գործեց «PeopleSupport»-ը, 2000 թ.՝ «eTelecare» և 2006 թ.՝ «Ventus»-ը (Maquito, 2017 թ., էջ 144): 10 տարի անց ոլորտի հիմնական խաղացողներից էին «Convergys»-ը, «JPMorgan Chase»-ը, «24/7 Customer Philippines»-ը, «Telephilippines»-ը և «Teletech»-ը, և արդեն 2012 թ. ԱՄՆ-ի 4 խոշոր բանկերը (JPMorgan Chase Bank N.A., Wells Fargo & Co, Citigroup, Bank of America) երկրում էին (Maquito, 2017 թ., էջ 144):

***Ներդիր 1. ԳԳԱ մատուցված ծառայությունների նկարագիրը և Ֆիլիպիններում 2012 թ. մատուցված հիմնական ծառայությունները՝***

*ԳԳԱ ծառայությունները ներառում են ձայնային և ոչ ձայնային ծառայություններ, գիտելիքի և իրավաբանական գործընթացների մշակում և այլ ՏՀՏ-ների վրա հիմնված ծառայություններ[3]: Ֆիլիպիններում հիմնականում մատուցվում էին ձայնի վրա հիմնված ծառայություններ, վերծանման և քաղվածքների պատրաստման ծառայություններ (բժշկական, իրավաբանական), բեք-օֆիսի գործառույթներ, անիմացիա և ստեղծագործ ծառայություններ[4]:*

[1] Maquito, F. C., & Andal, S. M. (2017). Development of Business Process Outsourcing in the Philippines. In: Hirakawa, H., Takahashi, N., Maquito, F., Tokumaru, N. (eds.) Innovative ICT Industrial Architecture in East Asia. New Frontiers in Regional Science: Asian Perspectives, vol 17. Springer, Tokyo. p. 144. doi:10.1007/978-4-431-55630-5_7

[2] Kleibert, J.M. (2016). Services-led Economic Development: Comparing the Emergence of the Offshore Service Sector in India and the Philippines In. Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, p. 36. Routledge doi: 10.4324/9781315772776-11

[3] Mitra, R.M. (2013a). The Information Technology and Business Process Outsourcing Industry: Diversity and Challenges in Asia. ADB Economics Working Paper Series No. 365. Mandaluyong, Philippines: ADB. p. 2.

[4] Kleibert, J.M. (2016). Services-led Economic Development: Comparing the Emergence of the Offshore Service Sector in India and the Philippines In. Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, p. 35. Routledge doi: 10.4324/9781315772776-11

2013 թ. ՏՏ-ԳԳԱ ոլորտում զբաղվածների թիվը 917,000 էր, և ձայնային ծառայությունների ենթաոլորտի մասնաբաժինը մեկ դրույքով աշխատակիցների զբաղվածության կառուցվածքում 63.9 % էր, իսկ 18.5 %-ը ոչ ձայնային ԳԳԱ/գիտելիքների գործընթացի արտապատվիրման ենթաոլորտինն էր (Maquito, 2017 թ., էջ 146): Համաձայն «Tholons Location»-ի գնահատման կարգի՝ 2015 թ. Ֆիլիպինների 8 քաղաքները և/կամ տարածաշրջանները ընդգրկված են եղել ամենագրավիչ ԳԳԱ վայրերի առաջին հարյուրյակում, իսկ Մանիլայի տարածաշրջանը հայտնվել էր 2-րդ տեղում, ինչը ցույց էր տալիս, որ ԳԳԱ ոլորտը ընդլայնվել էր ոչ միայն մայրաքաղաքի տարածաշրջանում, այլ նաև այլ տարածքների քաղաքներում (Maquito, 2017 թ., էջ 152, 155):

Աջակցող գործոն հանդես է եկել ժամանակակից հաղորդակցության ոլորտի զարգացումը՝ ինտերնետը, VOIP-ը և այլն (Ofreneo, 2015 թ., էջ 116)[1]: Սակայն դա ոչ միայն տեխնոլոգիական փոփոխությունների արդյունք էր, այլ նաև քաղաքական որոշումների, ինչն էլ հանգեցրեց նրան, որ զգալիորեն իջել էին միջազգային/հեռավոր զանգերի և ինտերնետից օգտվելու սակագները 2000-ական թթ. սկզբին (Kleibert և Mann, 2020, էջ 1069)[2]: Հեռահաղորդակցության ոլորտի ազատականացումը և սեփականաշնորհումը (1995 թ. մրցակցության ի հայտ գալը միջազգային/հեռավոր զանգերի մատուցման ուղղությամբ) նախագահ Ռամոսի օրոք (1992-1998 թթ.)[3] հնարավորություն տվեցին վերջնական սպառողներին ավելի էժան սակագներից օգտվել (Kleibert, 2016 թ., էջ 33)[4]: Օֆշորային ծառայությունների մատուցման ոլորտը ճանաչվեց որպես ներդրումային առաջնայնության ոլորտ և Ներդրումների խորհուրդը (BOI), Ֆիլիպինների տնտեսական գոտիների մարմինը (PEZA) սկսեցին շնորհել հարկային արտոնություններ, և օտարերկրյա ներդրողների վրա չէին տարածվում օտարերկրյա կապիտալով սեփականության հետ կապված սահմանափակումները, իսկ PEZA-ի սեփականաշնորհումից հետո նվազագույն տարածքի սահմանափակումը, որը տարածվում է Հատուկ տնտեսական գոտիների (SEZ) վրա, նվազեցվեց (Kleibert, 2016 թ., էջ 33):

ԳԳԱ ոլորտի աճը 1997-1998 թթ. ճգնաժամի տարիներին էր, որի ընթացքում փորձեր էին կատարվում այդ պահին մի շարք դատարկ, նորաոճ, բարձրահարկ, ինչպես բնակելի, այնպես էլ կոմերցիոն շենքերը հատուկ ՏՏ գոտի-

[1] Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, p. 116, DOI: 10.1080/13547860.2014.974335

[2] Kleibert, J.M., Mann, L. (2020). Capturing Value amidst Constant Global Restructuring? Information-Technology-Enabled Services in India, the Philippines and Kenya. The European Journal of Development Research, Volume 32, p. 1069. doi:10.1057/s41287-020-00256-1

[3] The Government of Philippines, http://malacanang.gov.ph/fidel-ramos/

[4] Kleibert, J.M. (2016). Services-led Economic Development: Comparing the Emergence of the Offshore Service Sector in India and the Philippines In: Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, p. 33. Routledge doi: 10.4324/9781315772776-11

ների վերածելու ուղղությամբ, և այս գաղափարը իրականություն դարձնելու առաջնեկներից է եղել անշարժ գույքի մագնատ Andrew Tan-ը իր «Megaworld» ընկերության միջոցով, ով ակտիվ լոբբինգով էր զբաղվում, որպեսզի ունենա SS պարկեր, և շենքերը պաշտոնապես ճանաչվեն որպես հատուկ տնտեսական գոտիներ (Raquiza, 2017 թ., էջ 230)[1]: Այս ամենի արդյունքում նրա «Eastwood City» շինարարական նախագիծը Մանիլայի հավաքական շրջանի Պասիգում դարձավ երկրի առաջին կիբեր-գոտին, որը գրանցվել էր PEZA-ի կողմից (Raquiza, 2017 թ., էջ 230)[2]: Դա էլ իր հերթին հանգեցրեց նրան, որ ոչ ծայրամասերում գտնվող բարձրակարգ գրասենյակային շենքերի առանձին հարկեր կարող էին օգտվել հարկային արտոնություններից, որի հետևանքով SS պարկերի թիվը կտրուկ ավելացավ՝ 1999 թ.-ի 0-ից հասնելով 168-ի 2013 թ. (Kleibert, 2016 թ., էջ 33)[3]:

Կենտրոնական կառավարությունը և տեղական մարմիններն իրենց դերակատարումն ունեցան օֆշորային ծառայությունների մատուցման ոլորտի զարգացման գործում (Kleibert, 2016 թ., էջ 34): 2004 թ. հոկտեմբերին նախագահ Արրոյոյի № 372 հրամանագրով ստեղծվեց աշխատանքային խումբ (ներառելով նաև մասնավոր հատվածի ներկայացուցիչներ) Ֆիլիպինների՝ համաշխարհային մակարդակով մրցունակ ծառայությունների ոլորտները զարգացնելու նպատակով, որի աշխատանքները պետք է համակարգեր Արդյունաբերության և առևտրի վարչության (DTI) Արտահանման խրախուսման բյուրոն (Raquiza, 2017 թ., էջ 230): Աշխատանքային խումբը պատասխանատու էր արտոնությունների և բարենպաստ պայմանների բացահայտման համար, որոնք կներգրավեին օտարերկրյա ներդրողների հետևյալ ոլորտներ՝ առողջապահություն և առողջարար զբոսաշրջություն, SS և SՀS-ների վրա հիմնված ծառայություններ՝ ԳԳԱ, լոգիստիկա և այլն (Raquiza, 2017 թ., էջ 230):

Ի հավելումն մշակված գործիքակազմին (տե՛ս ներդիր 2-ը)՝ կառավարությունը նույնպես անմիջական ֆինանսական աջակցություն էր տրամադրում ոլորտը ներկայացնող և 2004 թ. պետության կողմից հիմնադրված Ֆիլիպինների գործնական մշակման ասոցիացիային՝ ներառյալ կրթական ծրագրերի ֆինանսավորումը, որի նպատակն էր ավելացնել համապատասխան աշխատուժի առաջարկը ոլորտի համար, իսկ 2013 թ. այն վերանվանվեց Ինֆորմա-

[1] Raquiza, A. R. (2017). Philippine Services Sector: Domestic Policy and Global Markets. In: Khoo, B., Tsunekawa. K., Kawano. M. (eds.) Southeast Asia beyond Crises and Traps. Studies in Economic Transition, Chapter 8, p. 230. Palgrave Macmillan, Cham. doi:10.1007/978-3-319-55038-1_8

[2] Raquiza, A. R. (2017). Philippine Services Sector: Domestic Policy and Global Markets. In: Khoo, B., Tsunekawa. K., Kawano. M. (eds.) Southeast Asia beyond Crises and Traps. Studies in Economic Transition, Chapter 8, p. 230. Palgrave Macmillan, Cham. doi:10.1007/978-3-319-55038-1_8

[3] Kleibert, J.M. (2016). Services-led Economic Development: Comparing the Emergence of the Offshore Service Sector in India and the Philippines In: Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, p. 33. Routledge doi: 10.4324/9781315772776-11

ցիոն տեխնոլոգիաների գործնական մշակման ասոցիացիա (Kleibert, 2016 թ., էջ 34, 36, 42): 2015 թ. Ասոցիացիայի 210 անդամները օտարերկրյա կապիտալով ընկերություններ են եղել, սակայն խորհրդի անդամները տեղացիներ էին, և բացի կառավարության ֆինանսավորումից ու անդամավճարներից, ասոցիացիան զգալի միջոցներ էր ստանում հեռահաղորդակցության ծառայություններ մատուցողներից և կառուցապատողներից (Kleibert, 2016 թ., էջ 36-37):

*Ներդիր 2. Ֆիլիպիններում կառավարության կողմից կիրառված աջակցությունը ՏՏ-ԳԳԱ ոլորտի զարգացման նպատակով*[1]

*Հիմնական ազգային տեսլականները, ռազմավարական պլանները և ծրագրերը*

- Ֆիլիպինների զարգացման միջնաժամկետ 2004-2010 և 2011-2016 թթ. ծրագրերը,
- Գործնական մշակման ասոցիացիայի կողմից և շահագրգիռ կողմերի հետ համատեղ մշակված ՏՏ-ԳԳԱ ոլորտի զարգացման ճանապարհային քարտեզներ 2010-ը և 2016-ը,
- Ֆիլիպինների 2011-2016 թթ. թվային ռազմավարության մեկնարկը ՏՀՏ հանձնաժողովի կողմից 2011 թ.,
- Ազգային լայնաշերտ ինտերնետի ծրագիր 2016-ը,
- Ֆիլիպինների ՏՏ-ԳԳԱ բրենդի կառավարման ծրագիր,
- Կառավարության ՏՀՏ գրասենյակի կողմից պետություն-մասնավոր հատված ծրագրեր, որոնք ներկայացվել էին 2012 թ.,
- 2013 թ. Գիտության և տեխնոլոգիաների վարչության կողմից մշակված «The Smarter Philippines» ծրագրի մեկնարկը:

***Կիբեր-պարկեր և «Հաջորդ ալիքի» (Next Wave) քաղաքների զարգացում***

- Կիբեր-պարկերի թվաքանակի աճ (Տեխնոպարկեր, ՏՏ-պարկեր, էկո-գոտիներ). ստեղծվել էին մասնավոր ՏՏ-ԳԳԱ կամ կառուցապատողի հետ գործընկերության շրջանակում և առաջարկում էին գրասենյակային տարածքներ, անխափան կապի, ինտերնետի, հոսանքի և հարկային արտոնությունների հնարավորություն Մանիլայի ընդլայնված տարածաշրջանում և նրան կից համարվող Սեբույում, իսկ հետագայում՝ նաև այլ քաղաքներում,
- Ֆիլիպինների Կիբեր միջանցքի և «Հաջորդ ալիքի» քաղաքների նախաձեռնություններ. կառավարությունը ջանքեր էր գործադրում խթանելու ՏՏ-ԳԳԱ ոլորտի զարգացումը այլ վայրերում,
- Ֆիլիպինների տնտեսական գոտիների մարմնի արդյունաբերական պարկերը և տնտեսական գոտիները, որոնց դեպքերում տրամադրվում էին հարկային և ոչ հարկային արտոնություններ մասնավոր ներդրողների պարագայում

***Հարկային արտոնություններ***

- Եկամտային հարկից ազատում 4 տարվա ընթացքում, որը կարող էր երկարաձգվել և կազմել մինչև 8 տարի, եթե նոր ներդրումներ և այլ պահանջները կատարվեն,
- Համախառն եկամտի դեպքում կիրառվել է 5 % դրույքաչափ բոլոր ազգային և տեղական հարկերի փոխարեն հարկային արձակուրդի ժամանակի ավարտից հետո (ՏՏ-պարկի և/կամ տնտեսական գոտում գործունեություն ծավալողների համար),
- Հարկերից և մաքսատուրքից ազատում ներմուծված կապիտալ սարքավորման դեպքում (ՏՏ-պարկի և/կամ տնտեսական գոտում գործունեություն ծավալողների համար), առանց մաքսատուրքի կապիտալ սարքավորումների ներմուծում Ներդրումների խորհրդի կողմից գրանցված ընկերությունների համար,
- Արտահանման հարկերից, նավահանգստի և այլ տուրքերից, վճարներից ազատում,
- 12 % ԱԱՀ-ից ազատում ապրանքների և ծառայությունների թույլատրելի գնումների դեպքում՝

[1] Mitra, R.M, (2013b). Leveraging Service Sector Growth in the Philippines. ADB Economics Working Paper Series No. 366. Mandaluyong, Philippines: ADB. p. 8.

հեռահաղորդակցություն, հոսանք, ջուր (SS-պարկի և/կամ տնտեսական գոտում գործունեություն ծավալողների համար),

- Լրացուցիչ ծախսերի դուրսգրում՝ 50 %-ի չափով, աշխատողի վրա ծախսված ուսուցման և վերապատրաստման ծախսերի դեպքում, երբ ընկերության համախառն եկամտի դեպքում կիրառվել էր 5 %:

***Ոչ հարկային արտոնություններ***

- Տրամադրված սարքավորումների անսահմանափակ օգտագործում,
- Լիբերալ օրենսդրություն օտարերկրացիների աշխատանքի ընդունելու դեպքում և ներդրողներին ռեզիդենտի հատուկ վիզաների տրամադրում:

Ասոցիացիան զբաղվում էր արտոնությունների ստացման համար լոբբինգով, կազմակերպում էր մարքեթինգային արշավներ և զբաղվում էր ոլորտի բրենդինգով՝ օտարերկրյա ներդրողների ներգրավելու նպատակով (Kleibert, 2016 թ., էջ 37)[1]: Կառավարությունը և մասնավոր հատվածը սկսեցին ներդնել կրթության և լրացուցիչ կրթության մեջ, և այդպիսի նախաձեռնություններից մեկն էր «Ծառայությունների մենեջմենթ» ծրագիրը (21 բաժնից բաղկացած դասընթաց, որն առաջարկվում էր գործընկեր համալսարանների կողմից), որը մշակվել էր Բարձրագույն կրթության հանձնաժողովի և Ասոցիացիայի կողմից և որի նպատակն էր զարգացնել կառավարում, գործարար կառավարում, SS մասնագիտությամբ ուսանողների հմտությունները, որպեսզի վերջիններս համապատասխանեն ԳԳԱ ոլորտում առաջին աշխատանքի ընդունվելու ժամանակ անհրաժեշտ պահանջներին (Raquiza, 2016 թ., էջ 55)[2]:

2014 թ. ԳԳԱ ոլորտում արդեն աշխատում էր 1.03 մլն մարդ, իսկ ընկերության հասույթը կազմում էր 18.4 մլրդ ԱՄՆ դոլար, մինչդեռ այդ ցուցանիշը 2001 թ. ընդամենը 350 մլն ԱՄՆ դոլար էր, իսկ այս ոլորտը նաև նպաստեց հարակից ոլորտների զարգացմանը (հեռահաղորդակցություն, բանկային ոլորտ, տրանսպորտ և էներգետիկա) (Raquiza, 2017 թ., էջ 231)[3]: Արդեն 2018 թ. SS-ների վրա հիմնված ծառայությունների ոլորտում աշխատում էին 1.2 մլն աշխատակից, իսկ հասույթը կազմել էր 24.7 մլրդ ԱՄՆ

---

[1] Kleibert, J.M. (2016). Services-led Economic Development: Comparing the Emergence of the Offshore Service Sector in India and the Philippines In. Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, p. 37. Routledge doi:10.4324/9781315772776-11

[2] Raquiza, A.R. (2016). The BPO industry and the Philippine trade in services: Boon or bane? In: Beerepoot, N., Kloosterman, R.C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, p. 55. Routledge. doi:10.4324/9781315772776-12

[3] Raquiza, A. R. (2017). Philippine Services Sector: Domestic Policy and Global Markets. In: Khoo, B., Tsunekawa. K., Kawano. M. (eds.) Southeast Asia beyond Crises and Traps. Studies in Economic Transition, Chapter 8, p. 231. Palgrave Macmillan, Cham. doi:10.1007/978-3-319-55038-1_8

դոլար (Kleibert և Mann, 2020, էջ 1069)[1]:

«Ֆիլիպինների ՏՏ-ԳԳԿ-ի ճանապարհային քարտեզ 2022»-ի համաձայն՝ սպասարկման կենտրոնի և ԳԳԱ ենթաոլորտի պարագայում աճ էր ակնկալվելու հետևյալ ծառայությունների՝ ճարտարագիտական ծառայությունների արտապատվիրման, տվյալների անալիտիկայի, կատարողականի կառավարման, իրավաբանական գործընթացների արտապատվիրման կտրվածքով[2]: Տեխնոլոգիական փոփոխությունները կարող էին դանդաղեցնել աճը ցածր ավելացված արժեք ստեղծող ծառայությունների դեպքում (վերծանում/քաղվածքների պատրաստում, «Type I» ձայնային ծառայություններ)՝ հանգեցնելով աշխատուժի նկատմամբ պահանջարկի կրճատմանը, որի արդյունքում այդ տիպի ծառայություններ մատուցող ընկերություններում 2022 թ. կկրճատվի լրիվ դրույքով աշխատակիցների թվաքանակը՝ կազմելով 482,000 մարդ 2016-ի 525,000-ի համեմատ, թեպետ ցածր ավելացված արժեք ստեղծող ծառայությունների դեպքում հասույթի 27 % աճ է ակնկալվում[3]: Միևնույն ժամանակ ամենամեծ աճը ինչպես աշխատողների, այնպես էլ հասույթի կտրվածքով ակնկալվելու էր միջին ավելացված արժեք ստեղծող ծառայությունների պարագայում՝ համապատասխանաբար 388,000 մարդ և 46 %[4]:

*ՀՀ-ի և Ֆիլիպինների ծառայությունների ոլորտի զարգացումները և արտահանման միտումները:* ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում ծառայությունները 2019-2020 թթ. գերազանցել են 53 %-ը, իսկ մշակող արդյունաբերությունը համապատասխանաբար 11.7 % և 12.4 % է կազմել[5]: Ֆիլիպինների համեմատ՝ ՀՀ-ի մշակող արդյունաբերություն/ծառայությունների ոլորտ բալանսը ավելի վատ է, ինչը նշանակում է, որ մշակող արդյունաբերության զարգացումը պետք է դառնա երկրի տնտեսական քաղաքականության հիմնական առաջնայնություններից մեկը ծառայությունների ոլորտի զարգացմանը զուգընթաց:

ՀՀ ծառայությունների ճյուղի աճին 2005-2019 թթ. նպաստել է ծառայությունների արտահանումը, որը պայմանավորված էր ՀՀ-ում ավանդական և հատկապես զբոսաշրջիկների կողմից ՀՀ-ում ապրանքների և ծառայությունների վրա կատարած ծախքերի աճով (տե՛ս աղյուսակ 1): Այդ նույն ժամանակահատվածում Ֆիլիպիններում աճը պայմանավորված է եղել ժամանակակից ծառայությունների աճով (տե՛ս աղյուսակ 1): ՀՀ-ում ժամանա-

---

[1] Kleibert, J.M., Mann, L. (2020). Capturing Value amidst Constant Global Restructuring? Information-Technology-Enabled Services in India, the Philippines and Kenya. The European Journal of Development Research, Volume 32, p. 1069. doi:10.1057/s41287-020-00256-1.

[2] IBPAP (2017). The Philippine IT-BPM Roadmap 2022: Accelerate PH, Future Ready-Executive Summary. p. 14.

[3] IBPAP (2017). The Philippine IT-BPM Roadmap 2022: Accelerate PH, Future Ready-Executive Summary. p. 18.

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] Statistical Committee of the Republic of Armenia (2021). “Production of GDP: GDP” (accoding to SNA 2008) online database, https://www.armstat.am/en/?nid=202 (accessed: October 16, 2021)

կակից ծառայությունների մասնաբաժինը ծառայությունների արտահանման կառուցվածքում չի գերազանցել 18 %-ը 2005-2019 թթ., ինչն էլ իր հերթին բացատրվում է հատկապես համակարգչային ծառայությունների արտահանմամբ: Զգալիորեն աճել էին այլ գործնական ծառայությունների արտահանման ծավալները՝ կազմելով 42.6 մլն ԱՄՆ դոլար 2015 թ. 2010-ի 9.6 մլն ԱՄՆ դոլարի համեմատ, իսկ 2019 թ. վերջինիս ծավալները 43.2 մլն ԱՄՆ դոլար էին (տե՛ս աղյուսակ 1):

*Աղյուսակ 1*

**Ծառայությունների արտահանումը ՀՀ-ում և Ֆիլիպիններում** [1]

| **Ֆիլիպիններ** | **2005** | **2010** | **2015** | **2016** | **2017** | **2018** | **2019** | **2020** |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ավանդական ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար) | 3,351 | 4,272 | 7,510 | 10,105 | 13,274 | 15,394 | 17,358 | 8,107 |
| *Զբոսաշրջություն (մլն ԱՄՆ դոլար)* | *2,287* | *2,645* | *5,272* | *5,143* | *6,988* | *8,240* | *9,781* | *2,010* |
| Ժամանակակից ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար) | 5,260 | 13,510 | 21,555 | 21,099 | 21,558 | 23,003 | 23,906 | 23,437 |
| *Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար)* | *653* | *2,236* | *3,461* | *5,493* | *5,638* | *5,940* | *6,098* | *5,610* |
| *Այլ գործնական ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար)* | *4,494* | *11,087* | *17,551* | *15,125* | *15,580* | *16,653* | *17,456* | *17,650* |
| Ծառայությունների արտահանում (մլն ԱՄՆ դոլար) | 8,611 | 17,782 | 29,065 | 31,204 | 34,832 | 38,397 | 41,264 | 31,543 |
| *Ավանդական ծառայություններ (%, ծառայությունների արտահանում)* | *38.9 %* | *24.0 %* | *25.8 %* | *32.4 %* | *38.1 %* | *40.1 %* | *42.1 %* | *25.7 %* |
| *Ժամանակակից ծառայություններ (%, ծառայությունների արտահանում)* | *61.1 %* | *76.0 %* | *74.2 %* | *67.6 %* | *61.9 %* | *59.9 %* | *57.9 %* | *74.3 %* |
| **Հայաստան** | | | | | | | | |
| Ավանդական ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար) | 358.4 | 855.9 | 1,315.7 | 1,426.0 | 1,726.6 | 1,878.2 | 2,075.1 | 686.3 |
| *Զբոսաշրջություն (մլն ԱՄՆ դոլար)* | *222.7* | *645.7* | *935.8* | *1,016.5* | *1,203.7* | *1,329.0* | *1,528.0* | *292.8* |
| Ժամանակակից ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար) | 71.7 | 157.3 | 198.1 | 246.5 | 296.2 | 340.0 | 355.4 | 418.7 |
| *Հեռահաղորդակցության, համակարգչային և տեղեկատվական ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար)* | *49.3* | *127.5* | *130.5* | *173.1* | *211.6* | *251.7* | *261.7* | *328.5* |
| *Այլ գործնական ծառայություններ (մլն ԱՄՆ դոլար)* | *9.5* | *9.6* | *42.6* | *45.3* | *48.9* | *45.9* | *43.2* | *42.4* |
| Ծառայությունների արտահանում (մլն ԱՄՆ դոլար) | 430.1 | 1,013.2 | 1,513.8 | 1,672.5 | 2,022.8 | 2,218.2 | 2,430.6 | 1,105.0 |

[1] Central Bank of the Republic of the Philippines (2021). “Services” database, available at: https://www.bsp.gov.ph/SitePages/Statistics/External.aspx?TabId=1 (accessed: October 16, 2021). Statistical Committee of the Republic of Armenia (2021). “Balance of Payments 6” online database, available at: https://www.armstat.am/en/?nid=203 (accessed: October 16, 2021): Նշում՝ հեղինակների սեփական հաշվարկ, որի համար հիմք է հանդիսացել Sermcheep S. (2019). Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 1(2), p. 172-ում ներկայացված մեթոդաբանությունը:

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Ավանդական ծառայություններ (%, ծառայությունների արտահանում)* | *83.3 %* | *84.5 %* | *86.9 %* | *85.3 %* | *85.4 %* | *84.7 %* | *85.4 %* | *62.1 %* |
| *Ժամանակակից ծառայություններ (%, ծառայությունների արտահանում)* | *16.7 %* | *15.5 %* | *13.1 %* | *14.7 %* | *14.6 %* | *15.3 %* | *14.6 %* | *37.9 %* |

Ցավոք, ՀՀ վիճակագրական կոմիտեն չի տրամադրում ավելի մանրամասն բացվածք, որպեսզի պարզ դառնա, թե ո՛ր ծառայություններն ամենամեծ բաժինն ունեն այլ գործնական ծառայությունների արտահանման կառուցվածքում, ինչպես դա արվում է Ֆիլիպինների դեպքում: Այդպիսի տեղեկատվության առկայությունը հնարավորություն կտա բացահայտելու առկա միտումները և համապատասխան քաղաքականության մշակման դեպքում կարող է հանգեցնել ոլորտի զարգացմանը: Կանխատեսումների համաձայն՝ մի շարք գործնական ծառայությունների արտապատվիրումից որոշների դեպքում աճ է ակնկալվում 2021-2028 թթ. ինչպես ցածր այնպես էլ միջին (տվյալների անալիտիկա և այլն)[1] և բարձր ավելացված արժեք ստեղծող ծառայությունների դեպքում[2]: Հետևաբար ՀՀ-ն համապատասխան միջոցառումների և ենթակառուցվածքների առկայության դեպքում (ինչպես Ֆիլիպիններն էին ստեղծում) հատկապես Երևանից դուրս կարող է ներգրավել այն ընկերություններին, որոնք արտապատվիրում են այդ ծառայությունները այլ ընկերություններին, իսկ դա երիտասարդների զբաղվածության խնդիր կլուծի, ինչպես նաև կնպաստի տարածաշրջանային հավասարաչափ զարգացմանը, ինչպես դա տեղի է ունում Ֆիլիպիններում:

Ի տարբերություն ՀՀ-ի՝ Ֆիլիպիններում ստեղծվել էր աշխատանքային խումբ երկրի՝ արտահանման խրախուսմամբ զբաղվող կառույցի պատասխանատվության ներքո ավանդական և ժամանակակից ծառայությունների ոլորտները ավելի մրցունակ դարձնելու և արտահանման ծավալները ավելացնելու նպատակով, ինչը նախատեսում էր համապատասխան արտոնությունների մշակում և այլն:

Ինչպես Ֆիլիպիններում այնպես էլ ՀՀ-ում ծառայությունների ոլորտի զարգացման գործում, հատկապես մանրածախ առևտուր, կրթություն և այլն, կարևոր դերակատարում են ունեցել դրամական փոխանցումները, որոնց հարաբերակցությունը ՀՆԱ-ին 2019 թ. գրեթե նույն մակարդակի վրա է եղել ինչ Ֆիլիպիններում[3]: Իսկ Ֆիլիպինների պարագայում մշակված միգրացիոն քաղաքականությունն է եղել պատճառներից մեկը, որ կառավարությունը գնացել էր դեինդուստրման ուղիով: Իսկ ՀՀ-ի պարագայում դեինդուստրա-

[1] IBPAP (2017). The Philippine IT-BPM Roadmap 2022: Accelerate PH, Future Ready-Executive Summary. p. 18.

[2] Grand View Research (2021). Business Process Outsourcing Market Size Report, 2021-2028: Report Summary, https://www.grandviewresearch.com/industry-analysis/business-process-outsourcing-bpo-market (accessed: October 25, 2020)

[3] World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021).

ցումը պայմանավորված էր պատերազմով և դրա հետևանքով սահմանների փակմամբ և այլն:

***Գիտական նորույթը:*** Վերլուծելով Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերափոխման գործընթացը և դրանում ժամանակից ծառայությունների ոլորտի կայացման դերը՝ բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը և ՀՀ-ում այլ գործնական ծառայությունների (ԳԳԱ) արտահանման ծավալների ավելացման նպատակով համապատասխան միջոցառումների ընտրությունը, որոնք հաջող կիրառվել են Ֆիլիպինների կողմից.

- հաշվի առնելով ՀՀ-ում մշակող արդյունաբերության և ծառայությունների դերը տնտեսական աճի ապահովման գործում՝ Ֆիլիպինների զարգացման ուղու ուսումնասիրության հիման վրա հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը երկրում ներառական տնտեսական աճ ապահովելու նպատակով:
- Հաշվի առնելով ՀՀ-ում ժամանակակից և ավանդական ծառայությունների ոլորտների մրցունակության բարձրացման անհրաժեշտությունը՝ Ֆիլիպինների օրինակով հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ-ում համապատասխան մարմնի ստեղծումը:
- Հաշվի առնելով ՀՀ-ում այլ գործնական ծառայությունների ոլորտի զարգացման անհրաժեշտությունը՝ Ֆիլիպինների օրինակով հիմնավորվել և առաջարկվել է համապատասխան միջոցառումների հիման վրա զարգացնել միջին ավելացված արժեք ստեղծող ծառայություններ (տվյալների անալիտիկա) նաև մարզերում՝ տարածքային հավասարաչափ զարգացում ապահովելու նպատակով:

***Եզրակացություններ և գործնական առաջարկություններ***

Ֆիլիպիններին, ի տարբերություն իր ասիական հարևանների, չհաջողվեց անցել ինդուստրացման ճանապարհով, այլ, ընդհակառակը, երկիրը գնաց դեինդուստրացման ուղիով, որի արդյունքում երկիրը վերափոխվեց ծառայությունների վրա հիմնված տնտեսության: Այս գործընթացում կարևոր գործոններից են եղել երկրի ԱՄՆ–ի գաղութ լինելը և դրա արդյունքում չեզոք ակցենտով անգլերենի իմացությունը, համակարգչային համապատասխան գիտելիքների առկայությունը և աշխատավարձերի մակարդակը, որոնք հնարավորություն ընձեռեցին Ֆիլիպիններին վերածվելու գործնական ծառայությունների արտապատվիրման համաշխարհային կենտրոնի՝ ներգրավելով խոշոր վերազգային կորպորացիաների ԱՄՆ-ից: Համաշխարհային մակարդակով այլ գործնական ծառայությունների առաջատար արտահանողներից մեկի վերածվելուն հետագայում նաև նպաստել են Ֆիլիպինների կառավարության կողմից մշակված միջոցառումները և տրամադրված արտոնությունները: Մյուս կողմից՝ երկրի՝ որպես ծառայությունների վրա հիմնված տնտե-

ության կայացմանը նպաստել է նաև 1970-ական թթ. երկրի կողմից մշակ-ված միգրացիոն քաղաքականությունը:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կա-տարել ստորև բերվող 3 կիրառական առաջարկությունները՝ հիմք ընդու-նելով Ֆիլիպինների փորձը և ՀՀ տնտեսության յուրահատկությունները.

1. հիմք ընդունելով ՀՀ-ում մշակող արդյունաբերության և ծառայությունների համապատասխան մասնաբաժինները ՀՆԱ-ի կառուցվածքում, ինչպես նաև ՀՀ-ում ներառական տնտեսական աճ ապահովելու անհրաժեշտու-թյունը՝ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը պետք է լինի մշակող արդյունաբերություն/ՀՆԱ հարաբերակցությունը առնվազն 15 %-ի վրա պահպանելը՝ ծառայությունների ճյուղի աճին զուգընթաց:
2. Հիմք ընդունելով ծառայություններ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում՝ առաջարկվում է ստեղծել աշխատանքային խումբ (տարբեր ոլորտների մասնագետներից և ՀՀ կառավարության ներկայացուցիչներից բաղկա-ցած), ինչպես նաև Կառավարությանը առընթեր ծառայությունների խոր-հուրդ, որը կհամակարգի աշխատանքային խմբի աշխատանքները: Խում-բը պատասխանատու կլինի ենթաոլորտային արտոնությունների և բարե-նպաստ պայմանների բացահայտման համար, որոնք կներգրավեն ներ-դրողների հետևյալ ոլորտներ՝ հատկապես ՏՏ և ՏՀՏ-ների հիման վրա ծառայություններ՝ գործնական գործընթացների արտապատվիրում (տվյալ-ների անալիտիկա և այլն), ինչպես նաև բժշկական զբոսաշրջություն և այլն: Խումբը նաև պատասխանատու կլինի ենթաոլորտների կտրվածքով զարգացման և արտահանման խրախուսման ռազմավարությունների մշակման համար՝ համապատասխան պետական գերատեսչության հետ համատեղ:
3. Ներկա փուլում այլ գործնական ծառայությունների ենթաոլորտներից առաջնայնություն տալ տվյալների անալիտիկային և նպաստել այդ են-թաոլորտ ներդրումների ներգրավմանը՝ հետևյալ քայլերի հաջորդակա-նությամբ պայմանավորված.

**Կարճաժամկետ հատված՝**

- Գործընկեր համալսարանների ընտրություն (ներառյալ մարզային) և դրանց հետ համատեղ դասընթացների կազմակերպում ուսանողների համար՝ ներառելով նաև տնտեսագիտություն մասնագիտությամբ սովո-րողներին և այլն:
- Համապատասխան ենթակառուցվածքների ապահովման նպատակով հատկապես մարզային քաղաքներում սահմանել ՏՏ պարկին վերագրվող նվազագույն տարածքային շեմ, ինչը հնարավորություն կտա նորակա-ռույցներում առանձին հարկերի հանդես գալ որպես ՏՏ պարկեր, և դրանց վրա կտարածվեն այդ գոտիներում գործող ընկերությունների համար նա-

խատեսված արտոնությունները: Սա նաև կխրախուսի շինարարության ոլորտի աճը մարզերում:

- Սահմանել համապատասխան արտոնություններ Ֆիլիպինների օրինակով:

**Կարճաժամկետ-միջնաժամկետ հատված՝**

- Մշակված դասընթացների շրջանավարտներից համապատասխան ընկերությունների հիմնում և աջակցություն արտապատվիրման աշխատանքների ներգրավման գործում:
- Համապատասխան աշխատուժի առաջարկի առկայության դեպքում ներգրավել օտարերկրյա ընկերությունների:

**Միջնաժամկետ հատված՝**

- Այս հաջողված մոդելը տարածել այլ գործնական ծառայությունների ընտրված այլ ենթաոլորտների վրա:
- Այլ գործնական ծառայությունների ոլորտի աճի դինամիկան տեսնելու նպատակով առաջարկվում է, որ ՀՀ ՎԿ-ն ոլորտի արտահանման վիճակագրությունը հրապարակի ավելի մանրամասն բացվածքով:

### *Օգտագործված գրականության ցանկ / References*


1. Deloitte (2014). Competitiveness: Catching the next wave. The Philippines. London, UK: Deloitte Touche Tohmatsu Limited, available at: https://www2.deloitte.com/kh/en/pages/about-deloitte/articles/philippines-competitiveness-report-2014.html (acessed: October 14, 2021).
2. IBPAP (2017). The Philippine IT-BPM Roadmap 2022: Accelerate PH, Future Ready-Executive Summary, https://boi.gov.ph/wp-content/uploads/2018/03/Executive-Summary-Accelerate-PH-Future-Ready-Roadmap-2022_with-corrections.pdf (acessed: October 19, 2021)
3. Kim, J., & Wood, J. (2020). Service sector development in Asia: an important instrument of growth. Asian-Pacific Economic Literature. 34(1), 12-25. doi:10.1111/apel.12282
4. Kleibert, J.M. (2016). Services-led Economic Development: Comparing the Emergence of the Offshore Service Sector in India and the Philippines. In: Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, pp. 29-45. Routledge. Doi: 10.4324/9781315772776-11
5. Kleibert, J.M., Mann, L. (2020). Capturing Value amidst Constant Global Restructuring? Information-Technology-Enabled Services in India, the Philippines and Kenya. The European Journal of Development Research, Volume 32, 1057–1079 doi:10.1057/s41287-020-00256-1
6. Maca, M., & Morris, P. (2012). The Philippines, the East Asian "developmental states" and education: a comparative analysis of why the Philippines failed to develop. Compare: A Journal of Comparative and International Education, 42(3), 461–484. doi:10.1080/03057925.2011.652814

7. Maquito, F.C., & Andal, S. M. (2017). Development of Business Process Outsourcing in the Philippines. In: Hirakawa, H., Takahashi, N., Maquito, F., Tokumaru, N. (eds.) Innovative ICT Industrial Architecture in East Asia. New Frontiers in Regional Science: Asian Perspectives, vol 17. Springer, Tokyo. pp. 141–166. doi:10.1007/978-4-431-55630-5_7
8. Mitra, R.M. (2013a). The Information Technology and Business Process Outsourcing Industry: Diversity and Challenges in Asia. ADB Economics Working Paper Series No. 365. Mandaluyong, Philippines: ADB. 23 p. https://www.adb.org/sites/default/files/publication/30384/ewp-365.pdf (accessed: October 17, 2021)
9. Mitra, R.M. (2013b). Leveraging Service Sector Growth in the Philippines. ADB Economics Working Paper Series No. 366. Mandaluyong, Philippines: ADB. 23p. https://www.adb.org/sites/default/files/publication/30385/ewp-366.pdf (accessed: October 17, 2021
10. Nasir, Sh. & Kalirajan, K. (2014). Modern Services Export Performances among Emerging and Developed Asian Economies. ADB Working Paper Series on Regional Economic Integration No 143, Mandaluyong, Philippines: ADB. 33 p. Available at: https://aric.adb.org/pdf/workingpaper/WP143_Nasir_Kalirajan_Modern_Services.pdf (accessed: October 16, 2021).
11. Noland, M., Park, D. & Estrada, G. (2012). Developing the Service Sector as Engine of Growth for Asia: An Overview. ADB Economics Working Paper Series No. 320. Mandaluyong, Philippines: ADB. 40 p. https://www.adb.org/sites/default/files/publication/30080/economics-wp320.pdf (accessed: October 17, 2021)
12. Ofreneo, R. & Samonte, I. (2005). Empowering Filipino migrant workers: policy issues and challenges. International Migration Papers 64, International Labour Office: Geneva, Switzerland https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---asia/---ro-bangkok/documents/publication/ wcms_160550.pdf (accessed: July 29, 2021)
13. Ofreneo, R. E. (2015). Growth and employment in deindustrializing Philippines, Journal of the Asia Pacific Economy, 20:1, 111-129, DOI: 10.1080/13547860.2014.974335
14. Ofreneo, R.E. (2008). Arrested Development: Multinationals, TRIMs and the Philippines' Automotive Industry. Asia Pacific Business Review, 14(1), 65–84. doi:10.1080/13602380701661010.
15. Paprock, K. E., Yumol, B., & Atienza, T. V. (2006). National Human Resource Development in Transitioning Societies in the Developing World: The Philippines. Advances in Developing Human Resources, 8(1), 46–61. doi:10.1177/1523422305283057
16. Park, D. & Shin, K. (2012). The Service Sector in Asia: Is It an Engine of Growth? ADB Economics Working Paper Series No. 322. Mandaluyong, Philippines: ADB. 27p. https://www.adb.org/sites/default/files/publication /30092/economics-wp322.pdf (accessed: October 17, 2021)

17. Raquiza, A. R. (2016). The BPO industry and the Philippine trade in services: Boon or bane? In: Beerepoot, N., Kloosterman, R. C. & Lambregts, B. (eds.) The Local Impact of Globalization in South and Southeast Asia: Offshore Business Process Outsourcing in Services Industries, pp. 46-59. Routledge. Doi: 10.4324/9781315772776-12
18. Raquiza, A. R. (2017). Philippine Services Sector: Domestic Policy and Global Markets. In: Khoo, B., Tsunekawa. K., Kawano. M. (eds.) Southeast Asia beyond Crises and Traps. Studies in Economic Transition, Chapter 8, pp. 225–249. Palgrave Macmillan, Cham. doi:10.1007/978-3-319-55038-1_8
19. Sermcheep S. (2019). Services Export and Economic Growth in ASEAN Countries. Journal of Asian Economic Integration. 1(2):163-182. doi:10.1177/2631684619883443
20. Usui, N. (2012). Taking the Right Road to Inclusive Growth: Industrial Upgrading and Diversification in the Philippines. Mandaluyong, Philippines: ADB. 101 p. https://www.adb.org/sites/default/files/publication/29722/taking-right-road-inclusive-growth.pdf (accessed: October 17, 2021)
21. World Bank (2018). Growth and Productivity in the Philippines: Winning the Future. World Bank, Washington, DC. 137 p. https://openknowledge.worldbank.org/handle/10986/30450 (accessed: October 13, 2021)
22. Central Bank of the Republic of the Philippines (2021). "Net Goods" database, available at: https://www.bsp.gov.ph/SitePages/Statistics/External.aspx?TabId=1 (accessed: October 16, 2021).
23. Central Bank of the Republic of the Philippines (2021). "Services" database, available at: https://www.bsp.gov.ph/SitePages/Statistics/External.aspx?TabId=1 (accessed: October 16, 2021).
24. Statistical Committee of the Republic of Armenia (2021). "Balance of Payments 6" online database, https://www.armstat.am/en/?nid=203 (accessed: October 16, 2021)
25. Statistical Committee of the Republic of Armenia (2021). "Production of GDP: GDP" (accoding to SNA 2008) online database, https://www.armstat.am/en/?nid=202 (accessed: October 16, 2021)
26. World Bank (2021). World Development Indicators online database (last updated: 07/21/2021)
27. WTO (2021). WTO Data online database, https://timeseries.wto.org/ (accessed October 19, 2021)
28. Grand View Research (2021). Business Process Outsourcing Market Size Report, 2021-2028: Report Summary, https://www.grandviewresearch.com /industry-analysis/business-process-outsouring-bpo-market (acessed: October 24, 2021)
29. The Government of Philippines, http://malacanang.gov.ph/fidel-ramos/ (accessed: October 23, 2021)

# ՖԻԼԻՊԻՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆ

ՍԵՐԳԵՅ ԴՌԽՈԼՅԱՆ
ԱՆՆԱ ՄԱԿԱՐՅԱՆ

***Համառոտագիր:*** Ֆիլիպինները, ի տարբերություն իր ասիական հարևանների, գնաց դեինդուստրացման ուղիով, որի արդյունքում երկիրը վերափոխվեց ծառայությունների վրա հիմնված տնտեսության՝ վերածվելով գործնական ծառայությունների արտապատվիրման համաշխարհային կենտրոնի՝ ներգրավելով խոշոր վերազգային կորպորացիաների ԱՄՆ-ից:

**Հոդվածի նպատակն է՝** դիտարկելով Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերածվելու գործընթացը և դրանում ժամանակից ծառայությունների ոլորտի կայացումը (գործնական գործընթացների արտապատվիրում)՝ առաջարկել համապատասխան քայլեր ՀՀ տնտեսական քաղաքականության և ժամանակակից ծառայությունների արտահանման ծավալների ավելացման ուղղությամբ:

Այդ նպատակին հասնելու համար դրվել են ***հետևյալ խնդիրները.***

- տալ Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերափոխման ուղին և տնտեսական քաղաքականության փոփոխությունը,
- ուսումնասիրել Ֆիլիպինների ժամանակակից ծառայությունների ոլորտի կայացման ուղին՝ երկրի գործնական գործընթացների արտապատվիրման կենտրոնի վերափոխվելու օրինակով, ինչպես նաև այն գործոնները և միջոցառումները, որոնք խրախուսեցին այդ ոլորտի կայացումը,
- բացահայտել ու հիմնավորել ՀՀ-ում նմանատիպ միջոցառումների կիրառման կարևորությունն ու հնարավորությունները՝ ներկայացնելով ՀՀ-ի և Ֆիլիպինների ՏՏ-ԳԳԱ ծառայությունների արտահանման միտումները:

Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս կիրառվել են սինթեզի և համեմատական վերլուծության մեթոդները:

***Գիտական նորույթը:*** Վերլուծելով Ֆիլիպինների՝ ծառայությունների վրա հիմնված տնտեսության վերափոխման գործընթացը և դրանում ժամանակից ծառայությունների ոլորտի կայացման դերը՝ բացահայտվել և հիմնավորվել են ՀՀ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը և ՀՀ-ում այլ գործնական ծառայությունների (ԳԳԱ) արտահանման ծավալների ավելացման նպատակով համապատասխան միջոցառումների ընտրությունը, որոնք հաջող կիրառվել են Ֆիլիպինների կողմից.

- հաշվի առնելով ՀՀ-ում մշակող արդյունաբերության և ծառայությունների դերը տնտեսական աճի ապահովման գործում՝ Ֆիլիպինների զարգացման ուղու ուսումնասիրության հիման վրա հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը՝ երկրում ներառական տնտեսական աճ ապահովելու նպատակով:

- Հաշվի առնելով ՀՀ-ում ժամանակակից և ավանդական ծառայությունների ոլորտների մրցունակության բարձրացման անհրաժեշտությունը՝ Ֆիլիպին-ների օրինակի հիման վրա հիմնավորվել և առաջարկվել է ՀՀ-ում համա-պատասխան մարմնի ստեղծումը:
- Հաշվի առնելով ՀՀ-ում այլ գործնական ծառայությունների ոլորտի զարգաց-ման անհրաժեշտությունը՝ Ֆիլիպինների օրինակով հիմնավորվել և առա-ջարկվել է համապատասխան միջոցառումների հիման վրա զարգացնել միջին ավելացված արժեք ստեղծող ծառայություններ (տվյալների անալի-տիկա) նաև մարզերում՝ տարածքային հավասարաչափ զարգացում ապահո-վելու նպատակով:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարել ստորև բերվող **3 կիրառական առաջարկությունները**՝ հիմք ընդունելով Ֆիլիպին-ների փորձը և ՀՀ տնտեսության յուրահատկությունները.

1. հիմք ընդունելով ՀՀ-ում մշակող արդյունաբերության և ծառայություն-ների համապատասխան մասնաբաժինները ՀՆԱ-ի կառուցվածքում, ինչպես նաև ՀՀ-ում ներառական տնտեսական աճ ապահովելու անհրաժեշտությունը՝ տնտեսական քաղաքականության առաջնահերթությունը պետք է լինի մշակող արդյունաբերություն/ՀՆԱ հարաբերակցությունը առնվազն 15 %-ի վրա պահ-պանելը՝ ծառայությունների ճյուղի աճին զուգընթաց:

2. Հիմք ընդունելով ծառայություններ/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՀ-ում՝ առաջարկվում է ստեղծել աշխատանքային խումբ (տարբեր ոլորտների մաս-նագետներից և ՀՀ կառավարության ներկայացուցիչներից բաղկացած), ինչպես նաև Կառավարությանը առընթեր ծառայությունների խորհուրդ, որը կհամակար-գի աշխատանքային խմբի աշխատանքները: Խումբը պատասխանատու կլինի ենթաոլորտային արտոնությունների և բարենպաստ պայմանների բացահայտ-ման համար, որոնք կներգրավեն ներդրողների հետևյալ ոլորտներ՝ հատկապես ՏՏ և ՏՀՏ-ների հիման վրա ծառայություններ՝ գործնական գործընթացների ար-տապատվիրում (տվյալների անալիտիկա և այլն), ինչպես նաև բժշկական զբոսաշրջություն և այլն: Խումբը նաև պատասխանատու կլինի ենթաոլորտների կտրվածքով զարգացման և արտահանման խրախուսման ռազմավարություն-ների մշակման համար՝ համապատասխան պետական գերատեսչության հետ համատեղ:

3. Ներկա փուլում այլ գործառնական ծառայությունների ենթաոլորտներից առաջնայնություն տալ տվյալների անալիտիկային և նպաստել այդ ենթաոլորտ ներդրումների ներգրավմանը՝ հետևյալ քայլերի հաջորդականությամբ պայմա-նավորված.

Կարճաժամկետ հատված՝

- Գործընկեր համալսարանների ընտրություն (ներառյալ մարզային) և դրանց հետ համատեղ դասընթացների կազմակերպում ուսանողների համար՝ նե-րառելով նաև տնտեսագիտություն մասնագիտությամբ սովորողներին և այլն:
- Համապատասխան ենթակառուցվածքների ապահովման նպատակով հատ-կապես մարզային քաղաքներում սահմանել ՏՏ պարկին վերագրվող նվա-

զագույն տարածքային շեմ, ինչը հնարավորություն կտա նորակառույցներում առանձին հարկերի հանդես գալ որպես SS պարկեր, և դրանց վրա կտարածվեն այդ գոտիներում գործող ընկերությունների համար նախատեսված արտոնությունները: Սա նաև կխրախուսի շինարարության ոլորտի աճը մարզերում:

- Սահմանել համապատասխան արտոնություններ Ֆիլիպինների օրինակով:

Կարճաժամկետ-միջնաժամկետ հատված`

- Մշակված դասընթացների շրջանավարտներից համապատասխան ընկերությունների հիմնում և աջակցություն արտապատվիրման աշխատանքների ներգրավման գործում:
- Համապատասխան աշխատուժի առաջարկի առկայության դեպքում ներգրավել օտարերկրյա ընկերությունների:

Միջնաժամկետ հատված`

- Այս հաջողված մոդելը տարածել այլ գործնական ծառայությունների ընտրված այլ ենթաոլորտների վրա:
- Այլ գործառնական ծառայությունների ոլորտի աճի դինամիկան տեսնելու նպատակով առաջարկվում է, որ ՀՀ ՎԿ-ն ոլորտի արտահանման վիճակագրությունը հրապարակի ավելի մանրամասն բացվածքով:

***Բանալի բառեր*** ՝ *տնտեսական աճ, դեինդուստրացում, ծառայությունների վրա հիմնված աճ, ավանդական ծառայություններ, ժամանակակից ծառայություններ, արտահանում, գործարար գործընթացների արտապատվիրում, Ֆիլիպիններ, Հայաստան*

## ПУТИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ ФИЛИППИН

**СЕРГЕЙ ДОХОЛЯН**
**АННА МАКАРЯН**

***Аннотация.*** Филиппины, в отличие от своих азиатских соседей, пошли по пути деиндустриализации, и в результате в стране сформировалась экономика, основанная на услугах, став мировым центром по аутсорсингу деловых процессов с привлечением крупных транснациональных корпораций из США.

***Цель статьи.*** Рассматривая процесс превращения Филиппин в страну с экономикой, основанной на услугах, и становление в ней современной сферы услуг (а именно аутсорсинга практических процессов), предложить соответствующие шаги по увеличению объемов экспорта современных услуг и экономической политики Армении.

Для достижения этой цели были поставлены **следующие задачи**:

- Представить путь трансформации экономики Филиппин основанной на услугах и изменениях в экономической политики.

- Изучить процесс становления современной сферы услуг Филиппин на примере трансформации в центр аутсорсинга практических процессов страны, а также факторы и мероприятия, способствующие становлению этой сферы.
- Выявить и обосновать важность и возможности применения подобных мероприятий в Армении, представив тенденции экспорта ИТ-услуг РА и Филиппин.

При выводах об основных результатах исследования были применены методы синтеза и сравнительного анализа.

***Научная новизна.*** Анализируя процесс трансформации экономики Филиппин, основанной на услугах, и становления в ней современной сферы услуг, была выявлена и обоснована приоритетность экономической политики РА и выбор соответствующих мероприятий с целью увеличения объемов экспорта прочих деловых услуг в РА, которые успешно применялись Филиппинами:

- Учитывая роль обрабатывающей промышленности и сферы услуг в обеспечении экономического роста Армении, на основе изучения направления развития Филиппин обоснован и предложен приоритет экономической политики с целью обеспечения инклюзивного экономического роста в Армении.
- Учитывая необходимость повышения конкурентоспособности сферы современных и традиционных услуг в Армении, по примеру Филиппин было обосновано и предложено создание соответствующего органа в РА.
- Учитывая необходимость развития сферы прочих деловых услуг в Армении, на примере Филиппин было обосновано и предложено развивать услуги, создающие среднюю добавленную стоимость (аналитика данных) на основе соответствующих мер, а также с целью обеспечения равномерного территориального развития в регионах.

Исследования, проведенные в статье, позволяют сделать 3 ниже **приведенные прикладных предложения**, основываясь на опыте Филиппин и особенностях экономики Армении.

1. Принимая за основу соответствующие доли обрабатывающей промышленности и сферы услуг в структуре ВВП РА, а также необходимость обеспечения инклюзивного экономического роста в РА, приоритетом экономической политики должно быть сохранение как минимум на 15 % соотношения обрабатывающей промышленности к ВВП, параллельно росту сферы услуг.

2. Принимая во внимание соотношение сферы услуг к ВВП в РА, предлагается создать рабочую группу (состоящую из специалистов разных сфер и представителей правительства РА), а также Совет сферы услуг при Правительстве, который будет координировать работу рабочей группы. Группа будет нести ответственность за выявление преференций и благоприятных условий, которые будут привлекать инвесторов в следующие сферы: в частности, услуги, основанные на ИТ и ИКТ, в частности аутсорсинг деловых процессов (аналитика данных и т.д.), а также медицинский туризм и т.д. Группа также будет отвечать за разработку стратегий по развитию и стимулированию экспорта в разрезе каждого подсектора совместно с соответствующими государственными ведомствами.

3. На данном этапе дать приоритет аналитике данных из подсекторов прочих деловых-услуг и способствовать привлечению инвестиций в этот подсектор экономики согласно последовательности следующих шагов:

На краткосрочный период:

- Выбор университетов-партнеров (в том числе региональных) и организация совместно с ними курсов для студентов, включая студентов по специальности Экономика и т.д.
- С целью обеспечения соответствующих инфраструктур, особенно в городах регионов, установить минимальный территориальный порог, приписываемый ИТ-парку, что даст возможность в новостройках отдельным этажам выступить в качестве ИТ-парков и на них распространять льготы, предусмотренные для организаций, производящих свою деятельность в этих зонах. Это также стимулирует рост строительной отрасли в регионах.
- Установить соответствующие льготы и привилегии по примеру Филиппин.

На краткосрочный-среднесрочный период:

- Создание соответствующих компаний из выпускников разработанных курсов и содействие по привлечению аутсорсинговых контрактов.
- Привлечение иностранных компаний при наличии предложения соответствующей рабочей силы.

На среднесрочный период:

- Распространять эту успешную модель на другие выбранные подсектора прочих деловых услуг.
- Для того, чтобы отследить динамику роста сферы прочих деловых услуг, предлагается, что Статистический комитет РА будет публиковать статистику экспорта сферы более детально.

***Ключевые слова:*** экономический рост, деиндустриализация, рост основанный на услугах, традиционные услуги, современные услуги, экспорт, аутсорсинг деловых процессов, Филиппины, Армения

## THE ECONOMIC DEVELOPMENT PATH OF THE PHILIPPINES

**SERGEY DOKHOLYAN**
**ANNA MAKARYAN**

***Abstract.*** Unlike its Asian neighbors, the Philippines followed the path of deindustrialization, was transformed into a services-oriented economy, and emerged as a global hub of business process outsourcing by attracting large multinational corporations from the United States.

**Purpose of the article.** By considering the process of transformation of the Philippines into a services-oriented economy and how the country emerged as a modern services exporter (namely business process outsourcing (BPO)), to propose respective steps to increase the exports of modern services, and with respect to the priority of economic policy in Armenia.

The following **objectives** have been set to achieve this goal:

- to present the path of transformation of the Philippines into a services-oriented economy and the shift in the economic policy;
- to study how Philippines' modern services sector emerged, the path to a global BPO hub, and the factors and measures contributing to the growth of the sector;

- to identify and substantiate the importance and possibilities of utilizing such measures in Armenia by presenting the export trends on IT-BPO services in Armenia and the Philippines.

In drawing conclusions on the main results of the study, methods of conventional synthesis and comparative analysis have been applied.

***Scientific novelty***. By analyzing the transformation process of the Philippines into services-oriented economy and the role of modern services sector, the priority of the economic policy in Armenia and the choice of respective measures to increase the exports of other business services (BPO) have been identified and substantiated that were successfully utilized by the Philippines. By taking into account:

- the role of the manufacturing and the services sector in ensuring the economic growth in Armenia, and based on the study of development path of the Philippines, the priority of economic policy has been justified and proposed in order to ensure inclusive economic growth in Armenia;
- the need to increase the competitiveness of both modern and traditional services sectors in Armenia, and the case of the Philippines, creation of an appropriate body in Armenia has been justified and proposed;
- the need to develop other business services sector in Armenia, and Philippines background, respective measures have been substantiated and proposed to develop medium-end services (data analytics) sector in regions as well to ensure equitable development.

The study has enabled us to propose three below-mentioned **applied proposals** based on the study of the Philippines' transformation process and the characteristics of the Armenian economy:

1. By taking into account the manufacturing-to-GDP and services sector-to-GDP ratios and the need to ensure inclusive growth in Armenia, maintaining the manufacturing-to-GDP ratio at least at 15% along with the growth of the services sector needs to be the priority of the economic policy.

2. By taking into account the services sector-to-GDP ratio in Armenia, it has been proposed to create a working group (consisting of professionals from various sectors and representatives of the Government of Armenia), and establish a Council of Services Sector under the Government that will coordinate the working group. The Group will be responsible for identifying incentives, and favorable environment that will attract investors into the following sectors: IT and ICT-enabled services, namely BPO (data analytics, etc.), medical tourism, etc. The Group will be responsible for drafting Development and Export Promotion Strategies for each subsector in collaboration with corresponding government departments.

3. At the current stage, to prioritize data analytics subsector of other business services and promote investments according to the proposed following steps:

***Over the short-run period:***

- to select partner universities (including regional ones), design, and organize courses for students, including students majoring in Economics, etc.;
- to address the availability of respective infrastructure (especially in regional cities) define a minimum space requirement for an IT park, thus enabling various and/or a single floor in a new residential building to qualify for and act as an IT park. The companies operating on the premises of those parks will be granted and qualify for the benefits and incentives. This will stimulate the growth of construction industry in the regions of Armenia as well;

- to define respective incentives by taking into account those offered by the Philippines.

***Over the short- to medium-term period*:**

- to set up companies from graduates of designed courses and assist them in attracting outsourced contracts;
- to attract foreign companies into the selected sub-sector with the respective supply of workforce in place.

***Over the medium-term period:***

- to apply this success model with respect to various selected subsectors of other business services;
- in order to track the growth of the given sub-sector of other business services, it is proposed that the Statistical Committee of Armenia needs to release more detailed export data on other business services.

***Keywords:*** Economic growth, deindustrialization, services-oriented growth, traditional services, modern services, export, business process outsourcing, the Philippines, Armenia.